ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԵՌԱԿԱ ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

„ՋԱԿՁԻՖԵՆ"

Հ. Ս. Խ. Հ.-Ի ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ ՅԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

374
Ա-57

ВСЕНАРОДНЯ БІБЛІОТЕКА УКРАЇНИ

Յերեվան 1933

13 FEB 2013

18555 52.134

374
Ա-57

MAR 2010

# ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Հեռակա ուսուցման սիստեմի էությունը կայանում է նրանում, վոր ուսանողը չկտրվելով արտադրությունից յեվ չզգալով ամեն որ ուսումնական հիմնարկ հաճախելու կարիքը, հնարավորություն ունի ինքնուրույն յեվ ակտիվ կերպով մշակելու այն բոլոր առաջադրությունները, վորոնք նա ստանում է հեռակա ուսուցման ինստիտուտից, ձեռք է բերում բոլոր այն գիտելիքները, ինչ տալիս է սովորական (ստացիոնար) ուսումնական հիմնարկը։

Անդրկովկասյան հեռակա ֆին-տնտեսագիտական ինստիտուտի ուսանողը, հնարավորություն ունի առանց դասախոսի ոգնության, ստանալով ինստիտուտի կողմից մեթոդական ցուցմունքներ յեվ ղեկավարություն (աշխատանքի պլան, ցուցումներ գրականության մասին, հարցեր կրկնության յեվ ինքնստուգման համար յեվ այլն) ինքնուրույն կերպով, իր անմիջական ջանքերով մշակելու առաջադրած նյութերը յեվ հանձնարարված հիմնական ձեռնարկները։

Այսպիսով տարբերությունը ստացիոնար ուսումնական հիմնարկի յեվ հեռակա ուսուցման մեջ կայանում է միմիայն նրանում, վոր հեռակայողը ամեն որ չի հանդիպում դասախոսին, այլ ստանում է նրա սիստեմատիկ ոգնությունը, ցուցումները յեվ վերջապես կատարվում է նրա ձեռք բերած գիտելիքների ստուգումը։

Յերբ հեռակայողը իր կողմից ցուցահանի մաքսիմալ ակտիվություն յեվ ծրագրված կերպով մշակի առաջադրությունները, կարելի յե ստանալ այն բոլորը, ինչ վոր ստացիոնար ինստիտուտում։ Այս իսկ պատճառով, այն հեռակայողը, վորը կկատարի ամբողջ ուսումնական աշխատան-

ГОС.ПУБЛ.БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ

11046-57 (6171-53)

MAR 2010

մի պլանները, կստանա համապատասխան ստացիոնար ուսումնական հիմնարկի աշխատանքի վերակառուցում:

Հեռակա ուսուցման մեթոդն ունի խոշոր առավելություններ ստացիոնար ուսուցման մեթոդի համեմատ, այն տեսակետից, վոր տեսական ուսուցումն անմիջապես զուգակցվում ե պրակտիկայի հետ, շնորհիվ այն բանի, վոր ուսանողության խոշոր մասը գտնվում ե անընդհատ գործնական աշխատանքի մեջ յեվ բացի դրանից այն հեռակայողը, վորը հաջողությամբ կատարում ե Ինստիտուտի բոլոր առաջադրությունները, իրավունք ե ստանում նույնպես հաշվել արտադրական պրակտիկա անցնելու:

Բայց առարկաները լավ յուրացնելն ամբողջապես կախված ե նրանից, թե հեռակայողը ինչպես կկազմակերպի իր պարապմունքների ժամերը յեվ ուսումնառության ընթացքը, ինչպիսի խիստ ռեժիմ կսահմանի աշխատանքի մեջ, պարապմունքները կկատարի անընդհատ յեվ կանոնավոր կերպով, հաճախակի ստուգելով յեվ հաշվի առնելով ձեռք բերած գիտելիքները:

Այս բարդ պայմանների ճիշտ կատարումն ամբողջապես կախված ե հեռակայողից, այս իսկ պատճառով յուրաքանչյուր հեռակայող պետք ե ի նկատի ունենա, վոր անհրաժեշտ ե ամենախիստ կերպով պահպանել առարկաների ուսումնասիրման կարգի յեվ մեթոդների վերաբերյալ բոլոր կանոնները:

ա) Ամեն օր աշխատել 3 ժամ (ակադեմիական) կամ 2-ից մեկ-քառորդ սովորական ժամ, այդ ժամերը չոգտագործելու դեպքում այլեվս վոչ մի կերպ հատուցել հնարավոր չե:

բ) Բոլոր առաջադրությունները յեվ ստուգողական աշխատանքները կատարել ճշտորեն՝ ուսումնական մասի վորոշված ժամկետին:

գ) Բոլոր հետաքրքրող յեվ անորոշ հարցերով դիմել Ինստիտուտի Հայաստանի բաժանմունքին կամ համապատասխան կոնսուլտացիոն կետին:

դ) Ներկա գտնվել բոլոր կոնֆերանսներին, վորոնք կազմակերպվում են Ինստիտուտի կողմից:



Ինստիտուտի դիրեկտորատը ապահովում ե ուսանողությանը տալով նրան ուսումնա—մեթոդական ղեկավարություն, հրատարակում ե յեվ ուղարկում մեթոդական ցուցումներ, համապատասխան առաջադրություններ, նրանց կից հավելվածներ, բյուլետեններ յեվ այլն, կատարում ե նույնպես հեռակայողների ընդունելության յեվ զբաղվում ե նրանց կազմի հետագա կարգավորման հարցերով:

Ուսանողության ոպերատիվ սպասարկումը յեվ կենդանի կապը նրանց հետ, ինչպես որինակ՝ կոնսուլտացիաներ (բանավոր յեվ գրավոր), գրավոր աշխատանքների ստուգումը յեվ այլն, առաջին հերթին կատարում են Ինստիտուտի Հայաստանի յեվ Ադրբեջանի բաժանմունքները յեվ նրանց հետ կապված այն հենակետերը, վորտեղ կան կուտակված վորոշ թվով ուսանողներ:

Այնուհետեվ հեռակայողը պետք ե հաշվի առնի, վոր իրենից պահանջվում ե ինքնուրույնություն, ինքնակարգապահություն, պլանով աշխատելու ունակություն, պարզ գիտակցություն այն նպատակների, վորի համար կատարում ե ամբողջ աշխատանքը, յեվ վերջապես այդ աշխատանքի հետեվանքների նշանակության պարզ պատկերացում:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՅԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսումնական նյութերի մշակումն ըստ ուսումնա-ծրագրական պլանի կառուցվում ե հետեվյալ ձեվով՝

1. Ուսուցումը միաժամանակ կենտրոնանում ե միայն ինչ-վոր առարկաների վրա յեվ հետագայում մյուս առարկաները միացվում են վորոշ հաջորդականությամբ յեվ կապակցելով արդեն մշակված առարկաների հետ:

2. Յուրաքանչյուր գիտական դիսցիպլինի հեռակայողը մշակում ե հետեվյալ կարգով՝

ա) Ինստիտուտը՝ համաձայն ամեն մի դիսցիպլինի մշակման ծրագրի յեվ պլանի, ուղարկում ե հեռակայողին աշխատանքային նյութեր մեթոդական վերամշակումներով, յուրաքանչյուր թեմայի աշխատանքի պլանը, ցուցումներ գրականության մասին (հիմնական ձեռնարկներ յեվ դասագրքեր) ինքնուրույն մշակման համար, հար-

ցաթերթին ինքնաստուգման համար յեվ վերջապես ստուգիչ թեմաներ պարտադիր գրավոր աշխատանքների համար, վորոնց հիման վրա կատարվում ե առաջադիմության հաշվառումը։

բ) Բոլոր նյութերի յեվ ձեռնարկների մշակումը, խնդիրների լուծումը, յեվ այլն ընթերցումը յեվ վերլուծումը, հեռակայողը կատարում ե անմիջապես անհատապես միայն ինքը։

գ) Ըստ հարցաթերթի ամեն մի բաժնից հետո հեռակայողը զբաղվում ե յուրացման ինքնաստուգումով, նորից վերադառնալով աշխատանքային նյութերին դժվարության յեվ իր պատասխանների անվստահության դեպքում։

դ) Գրավոր ստուգողական աշխատանքները, վորոնք ուղարկվում են Ինստիտուտ, պետք ե ցույց տան հեռակայողի մաքսիմալ նվաճումները, այդ իսկ պատճառով նրանց մշակումը պետք ե լինի խորացրած յեվ մտածված, լավ ձեվակերպված յեվ պետք ե միանգամայն ինքնուրույն աշխատանքի բնույթ ունենա։

ե) Հեռակայողն իր աշխատանքը կազմակերպում ե լրիվ հաշվի առնելով իր ծառայության յուրահատուկ պայմանները, ժամանակի բյուջեն, ծանրաբեռնվածությունը, իր ձգտումը յեվ ընդունակությունները դեպի առանձին դիսցիպլինները, բայց անպայման ամենախիստ ռեժիմ պահպանելով յեվ հիմք ունենալով մշտական կանոնավոր ծանրաբեռնվածությունը։

3. Առաջադրությունը մշակվում ե համաձայն Ինստիտուտի մեթոդական ցուցումների, ճշտորեն պահպանելով գոյություն ունեցող ժամկետները։ Ժամկետները չպահպանելու հետեվանքը կլինի ուսանողի հետ մնալը յեվ մաղումը, վորովհետեվ նա չի կարող այլեվս հաղթահարել հետագա ուսումնական մատերիալը։

4. Հեռակայողի մշակած նյութը, համաձայն Ինստիտուտի ուս-մասի մեթոդական ցուցումների, հանձնվում ե գրավոր ստուգողական աշխատանքի ձեվով կամ բանավոր՝ Ինստիտուտի Հայաստանի բաժանմունքի համապատասխան կոնսուլտանտին։



5. Ստուգողական աշխատանքը գրվում ե համաձայն ստուգողական թեմայի։ Նման թեմաներ առաջարկվում ե ուսանողին մի քանիսը յեվ նա ընտրում ե համաձայն իր ցանկության յեվ գրում ե մի խորացրած աշխատանք։

Ստուգողական աշխատանքը հեռակայողն ուղարկում ե Հայաստանի բաժանմունք լրացրած ռեցենզիոն թերթի հետ միասին։ (Գրում ե թերթի համապատասխան տեղում ազգանունը, անունը, հայրանունը, բաժանմունքը յեվ մյուս պահանջված տվյալները)։

7. Ինստիտուտի Հայաստանի բաժանմունքում կոնսուլտանտը ստուգում ե գրավոր աշխատանքը, կատարում ե նրա վրա անհրաժեշտ ուղղումներ յեվ դիտողություններ, հետո տալիս ե ռեցենզիոն թերթիկի վրա իր յեզրակացությունը։

Ուղղված աշխատանքը յեվ ռեցենզիան ուղարկվում ե ուսանողին։

Ինստիտուտում մնում ե հաշվառման համար կոնսուլտանտի կողմից ստորագրված պատճեն։

8. Ինստիտուտը ղեկավարում ե ուսանողության աշխատանքները անհատական գրագրության, բանավոր կոնսուլտացիաների, կոնֆերենցիաների յեվ աշխատանքի սոցիալիստական կազմակերպության միջոցներով։

## Ա. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտը մեթոդական ղեկավարությունը կատարում ե ուսանողների հետ անհատական գրագրության միջոցով։ Հեռակայողների յեվ Ինստիտուտի միջեվ սերտ յեվ անընդհատ կապը պահպանվում ե հիմնականում սիստեմատիկ գրագրությամբ։

Ինստիտուտն ուղարկում ե ուսանողին նյութեր, ստուգողական թեմաներ յեվ հարցեր մեթոդական մշակումներով, պատասխանում ե ուսանողների հարցումներին, խորհուրդներ ե տալիս յեվ բացատրում ե ռեցենզիաները։

Հեռակայողն ուղարկում ե Ինստիտուտ ստուգողական աշխատանքներ, բոլոր դժվարությունների դեպքում դիմում ե Ինստիտուտին, ինչպես ուսումնամեթոդական հարցե-

րով, նույնպես ցեխ աշխատանքային մասերային անհատականայի լինելու դեպքերում. Նման բաժանմունքային նամակները պետք է լինեն կարճ, պարզ գրված, կոնկրետ դրված հարցերով:

Մշտական գրագրությունը նպաստում է հեռակայողների ավելի ակտիվացման և հեռակա մեթոդն ավելի է մոտեցնում ստացիոնար դպրոցի ուսանողների հետ անընդհատ շփում ունենալու տեսակետից:

## Բ. ԲԱՆԱՎՈՐ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆԵՐ

Հեռակա ուսուցումը վորոշ չափով ուսանողին մոտեցնելու համար՝ Անդրկովկասյան Հեռակա Ֆին—Տնտեսագիտական Ինստիտուտը կազմակերպում է նաև բանավոր կոնսուլտացիաներ, վորոնք լինում են անհատական և խմբակային:

Կոնսուլտացիաները կազմակերպում է Ինստիտուտի Հայաստանի բաժանմունքը Երևանում և Լենինականում: Շրջաններում կոնսուլտացիաներ լինում են ինչպես շրջական դասախոսական ուժերով, նույնպես և հատկապես կենտրոնից գործուղված դասախոսական կոնսուլտանտների ուժերով:

Բանավոր կոնսուլտացիաների միջոցին հեռակայողը կարող է ստանալ պատասխաններ և բացատրություններ բոլոր իրեն հետաքրքրող հարցերին:

Այդ կոնսուլտացիաները համախմբում են ուսանողներին և ավելի են մոտեցնում հեռակա միջոցը ստացիոնարին:

## Գ. ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ

Անդրկովկասյան Ֆին-Տնտեսագիտական Հեռակա Ինստիտուտը պարբերաբար կոնսուլտացիոն բյուրոներին կամ կենտրոններին կից հրավիրում է կոնֆերանսներ Հայաստանում բնակվող ուսանողության համար Երևանում, Լենինականում, Վաղարշապատում, Աշտարակում, Ղարաքիլիսայում: Կոնֆերանսներում հանրագումարի են բերում վորոշ ժամանակաշրջանում կատարված աշխատանքները, ստուգվում է՝ թե վորքան ճիշտ են ընտրված ընդհ. դասավանդման մեթոդները, կապը ուսանողների հետ, թե ինչպիսի փոփոխություններ պետք է մտցնել դասավանդման մեթոդների մեջ:



Այդ կոնֆերանսներում քննվում են ուսումնական բնույթ ունեցող հարցեր՝ (ուսպլաններ, ծրագրեր, կուրսի ծավալը, արտադրական ուսուցման հարցեր և այլն), մեթոդական հարցեր (ստուգողական աշխատանքների բնույթը, նրանց քանակն առանձին առարկաների վերաբերյալ, վարժությունների և խնդիրների բնույթը և այլն):

Բացի ընդհանուր ուսումնական կոնֆերանսներից կազմակերպվում են նաև կոնֆերանսներ առանձին բաժինների (ֆակուլտետների) կամ խմբակների՝ զեկուցման և հիմնական առարկաների ավելի կարևոր բաժինների մշակման համար:

Այդ կոնֆերանսները՝ շատ քիչ ուսանողական կազմով խնդիր են դնում մշակել առանձին հանգուցային հարցերը, սովորեցնում են ուսանողին ինքնուրույն կերպով մշակել առանձին պրոբլեմները, աշխատել գրքի վրա և ոգտվել ոժանդակ գրականությունից:

## Դ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Սոցիալիստական մրցակցությունը և հարվածայնությունը-աշխատանքի այս բարձրագույն ձևերը—պետք է գտնեն իրենց գործնական կենսագործումը և արտահայտվեն զգալի բարելավում ուսուցման գործում: Սոցմրցման հիմնական բջիջը հանդիսանում են բաժանմունքները, հենակետները, ապա կուրսերը, առանձին խմբերը և անհատ հարվածային հեռակայողները:

Հիմնականում սոցմրցումը կազմակերպվում է հետևյալ սկզբունքներով՝

ա) Պայքարել՝ հեռակայողների շարքերից դուրս մնացողներ չլինեն:

բ) Պայքարել՝ մշակվող նյութի վորակի համար, աշխատանքի պլանի և ստուգողական աշխատանքները ժամկետներին ներկայացնելու համար:

## ՅԵ. ՀԱՇՎԱՌՈՒՄ

Հաշվառման հիմնական ձևերը հանդիսանում են բանավոր քննությունները, ստուգողական աշխատանքների լրացուցիչ գնահատականները, բանավոր հարցաքննությունը տեղերում կայացվելիք կոնսուլտացիաների միջոցին յեվ հեռակայողների կոնֆերանսներում։

Գնահատական տրվում է չորս բալլային սիստեմով՝ գերազանց (5), լավ (4), բավարար (3) յեվ վոչ բավարար (2)։

## Զ. ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հեռակա ուսուցումն Անդրկովկասյան Ֆին-տնտեսագիտական ինստիտուտում ավարտվում է հեռակայողի կողմից գրավոր դիպլոմային աշխատանք կազմելով, վորից հետո տրվում է վկայական (ատտեստատ) ավարտելու մասին, վորն վերապահում է վորոշ իրավունքներ յեվ արտոնություններ։

Վորակավորման աշխատանքն ընդունվում է միայն այն հեռակայողից, վորը տվել է բոլոր ստուգողական աշխատանքները, բոլոր բանավոր քննությունները յեվ անցկացել է նայեվ արտադրական ուսուցումը։

Ինստիտուտի դիրեկտոր՝ Ի. ՌԱԽ

Ուսուցման վարիչ՝ Դ. ՄԵԳՐԵԼԻԴԶԵ

Ինստիտուտի Հայաստանի բաժանմունքի
դիրեկտոր՝ Վ. ԴԱՐՅԱՆ

Գյուղհրատի տպարան Գլավլիտ 8578 Պատվեր 273 Տիրաժ 300

ՀՀ Ազգային գրադարան
NL0216661

52. 159